ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/20

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Վերիտաս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Վերիտաս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 23.01.2020թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Արգելել «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովին՝ պայմանագիր կնքելու «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում:

2. Պարտադրել պատվիրատուին ընդունել որոշում, ընթացակարգի մասնակիցներին հրավիրելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) բողոքը մակագրվել է 23.01.2020թ.-ին: 24.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/11 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/11 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/20 համարի ծածկագիրը և 17.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 17.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.02.2020թ.-ին:

2. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 23.01.2020թ.-ին ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Ընկերությունը 23.01.2020թ.-ին ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Արգելել «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովին՝ պայմանագիր կնքելու «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում:

2. Պարտադրել պատվիրատուին ընդունել որոշում, ընթացակարգի մասնակիցներին հրավիրելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 23.01.2020թ.-ին ներկայացված բողոքի հիման վրա, որով վիճարկվել է «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հրավերի բոլոր՝ թիվ 1-13-րդ չափաբաժինների մասերով մատակարարման պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումը, Բողոքներ քննող անձի 07.02.2020թ.-ի կայացված թիվ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/04 որոշմամբ բողոքը բավարարվել է:

Վերոնշյալ որոշմամբ Բողոքներ քննող անձը որոշել է՝ պարտավորեցնել «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.12.2019թ.-ի թիվ 2 արձանագրությունը և 21.01.2020թ.-ին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 18.02.2020թ.-ին կայացված թիվ 3 արձանագրության համաձայն՝ ամփոփվել է բանակցությունների արդյունքները:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ մինչև «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի քննության ավարտը, գնահատող հանձնաժողովը, կատարելով գնումների հատ կապված բողոքներ քննող անձի 07.02.2020թ.-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/04 իրավապարտադիր որոշման պահանջը, կազմակերպել և անցկացրել է բանակցություններ, որին մասնակցություն է ունեցել նաև «Վերիտաս» ՍՊԸ-ն և թիվ 10-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 23.01.2020թ.-ին ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության, հաշվի առնելով, որ բողոքի պահանջը ըստ էության կատարվել է, որպիսի պայմաններում բողոքի քննությունը դառնում է առարկայազուրկ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 23.01.2020թ.-ին ներկայացրած բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**